

ՃԱՊՈՆՈՒՅԻՆ

ըստ Հեսսէ Վարտէզի

Ճապոնիայում կանանց ճանաչելը շատ աւելի դիւրին է քան ուրիշ արեւելեան երկրներում, ասում է Հեսսէ Վարտէզը: Այնտեղ, ուր թագաւորում է Իսլամը, կանանց թաղցնում ու խնամքով պահում են, այնպէս որ ոչ մի օտար տղամարդ չի կարող նոցա տեսնել: Հնդկաստանում թագնւում են «կանանոցներում»: Չինաստանի բարձր շրջանի կանայք ծածկւում են իրանց ընդարձակ բնակարանների չորս պատերի մէջ: Կորէայում, մի օտար տղամարդ տեսնելիս, կինն իրան երեսն է ծածկում կամ իսկոյն փախչում է:

Իսկ Ճապոնիայում բոլորովին այլ կերպ է: Նոցա կանայք ամենևին ծանօթ չեն հարեմների ու կանանոցների հետ և ճշնշուած չեն իրանց շարժումների մէջ. նոքա դէմքերը քօղով չեն ծածկում, գլուխները չեն փաթաթում: Եւ ընդհակառակը, այնտեղ կանայք փոխանակ ծածկուելու, մինչև իսկ շատ արդէն աչքի են ընկնում: Ճապոնական լեզուն այնքան էլ դժուար չէ. ինչպէս միւս ազգերինը և, ճապոնուհին օտարականի հետ շատ շուտով է ընտելանում ինչպէս իրան հայրենակից տղամարդու հետ:

Եւ նոյն իսկ, եթէ ճանապարհորդը չուզենայ էլ նոցա դուրեկան ու քաղցրահնչիւն լեզուն սովորել, դարձեալ շատ հեշտութեամբ կարող է ճապոնուհու կեանքը մանրամասն կերպով ուսումնասիրելու այդ ոչ այն պատճառով, որ նոքա պարզախօս են, ոչ, ընդհակառակը, նոքա նոյնպէս ծածկամիտ են, ինչպէս և միւս արեւելցի ժողովուրդը. բայց թէ Ճապոնիայի ամբողջ ընտանեկան կեանքը կարծես հայելու պէս պարզ է: Թէ փողոցային կեանքում, թէ տօների ժամանակ, թէ թատրոններում ու թէյատներում և թէ հիւրանոցներում, կանայք համարեա նոյն դերն են խաղում, ինչ որ տղամարդիկ: Եւ ով

որ ամառը գտնուել է Ճապոնիայում, անշուշտ տեսել է նոցա ընտանեկան կեանքը, սիրուն պարտէզներով շրջապատուած տների մէջ, որոնք ամբողջ օրը բաց են լինում և ամեն մարդ կարող է նկատել, թէ ինչ է կատարուում տան ներսում:— Ջորջիանակ առաւօտ է, անս փայտէ շիրմաները, որ դրսից ծածկուած են լինում տան շուրջը դռների փոխարէն, յետ են տարուում և այնտեղ տղամարդը հագնուում է, կինը երեսին ներկ է քսում, մէկ ուրիշ կին տան անդամներից ճապոնական ձևի տաշտը տան առաջ, փողոցում դրած, լողանում է. տան մեծ աղջիկը կրակարանը ներս է բերում ու սկսում է թէյ պատրաստել փոքրիկ, սիրուն գաւաթների մէջ և այն: Եւ այդ ամենը կատարուում է անց ու դարձ անողների աչքի առաջ:

Եւ շատ շաւ է, որ այդպէս է դրուած նոցա ընտանեկան կեանքը, որովհետեւ այդ սքանչելի երկրին մի առանձին տեսակ գեղեցկութիւն և համ ու հոտ են տալիս այնտեղի կանայք, շեշտում է Հեստէ Վարտէզը: Եւ ճանապարհորդը, որ մի քանի ամիս մնացել է Ճապոնիայում, անկասկած հայրենիք վերադառնալիս երազում է նոցա մասին և հիանում նոցա վերայ, շարունակում է հեղինակը:

Ճապոնուէիք իրանց ամբողջ կեանքը նուիրում են տղամարդուն. չարաչարուում են նորա համար, աշխատում են դուր գալ նորան, թեթևացնել ու բարելաւել նորա կեանքը և կամաւոր կերպով իրանց զոհ են բերում նորա համար: Ոչ մի ասիական երկրի ժողովրդի մէջ չեն գտնուի այնպիսի սիրելի մանուկներ, ուրախ ու բարի տղաներ, տաննաքնքոյշ աղջիկներ, սիրող ամուսիններ ու ամենալաւ մայրեր, ինչպէս որ Ճապոնիայում են: Բայց թէ այդ ամենի փոխարէն որչափ քիչ են գնահատուում ճապոն կանայք իրանց ամուսիններից ու տղամարդկանցից առհասարակ: Թէ և աշխարհիս երեսին ամեն բան հակառակն է լինում. Եւրոպայում այդպիսի կանանց, անկասկած, ձեռքերի վերայ ման կածէին, նոցա կը պաշտէին ու կը յարգէին, իսկ այնտեղ, ճապոն տղամարդը կնոջ վերայ շատ բարձրից է նայում, ինչպէս իւր ստորադրեալի վերայ. իսկ նորա արած անձնագործութիւնը նա համարում է կնոջ պատականութիւնը, աւելի ոչինչ:

Ճապոնիան չէ ունեցել ոչ իւր Վերթէրը, ոչ Տօհէնբուրգը և ոչ էլ իւր Ռօմէօս և երբէք, ոչ մի ճապոնացի իւր սիրած կնոջ համար ոչ մի քաջագործութիւն կամ զոհաբերութիւն չէ արել: Այնտեղ առաջնութիւնը պատկանում է տղամարդուն, ոչ թէ կնոջը:

Թէև, քաղաքավարի ճապոնացին դէպի տիկիններն ու օրիորդները յարգանքով է վերաբերուում, նոցա անուան առջ դնելով «Օ» մասնիկը, որ նշանակում է յարգելի. ասենք դա էլ այնքան մեծ նշանակութիւն չունի, քանի որ կառապաններին էլ դիմում են այդ ձևով: Դօքտօր Կէյսուը ճապոնիայի մասին գրած իւր աշխատութեան մէջ պատմում է, որ իւր հարևան կրոնացին մի շուն ունէր Մէյէր անունով և նորա ճապոն ծառաները շանը կանչում էին «Օ» Մէյէր: Թարգմանելու որ լինինք, դուրս կըգայ «յարգելի Մէյէր»:

Բայց գուցէ ճապոնուհին ինքն է մեղաւոր, որ այդպիսի խոնարհ դիրք է ստեղծել իր համար: Սկսենք աւելի մօտից ճանաչել նորան:

— Ճապոնուհին մի զարմանալի նուրբ, գրաւիչ արարած է, կարճ հասակով, փոքրիկ ձեռքերով ու ոտքերով, խնամքով սանդղրուած, սև սաթի պէս ճոխ մազերով. նորա աչքերը նման են Մարօնայի (Աստուածածնի) աչքերին, իսկ սիրտը, իսկ երեսայի սրտին է նման: Նա ժպտում է շարունակ, կարծես թէ իւր սիրելին միշտ մօտն է. իսկ վարմունքը շատ քաղաքավարի է ու շնորհալի: Եւրոպացու ճաշակով ճապոնուհին անպայման գեղեցիկ է: Նորա երեսի գոյնը Անդալուզացիներին է նման, թէև երկու ցեղի գոյնն էլ որոշելը դժուար է, քանի որ նոքա մեծ քանակութեամբ սպիտակ փոշի ու կարմիր ներկ են քսում դէմքերին: Ճափոն կինը խօսում է ցածր, մեղմ ձայնով և իւր տարիքը երբէք չի ծածկում: Նորա ատամները շատ գեղեցիկ ու սպիտակ են, բայց երբ նա ամուսնանում է, սև ներկ է քսում ատամներին, որ էլ երբէք դուր չգայ ո՛չ մի տղամարդու, բացի իւր ամուսնուց: Թէև այդ դուր է, քանի որ նա փակած շրթունքներով էլ սիրուն է:

— Ճապոնուհիք կարող են երկար ժամանակ լուռ մնալ, փակ պահել իրանց բերանները, որովհետև լաւ գիտեն, որ ապահարզանի եօթն կէտերից մէկն էլ շատախօսութիւնն է:

— Ճապոնուհու կազմուածքը, որ տգեղ ու չորչորիկ է, ծածկւում է սիրուն, երփներանգ կտորից կարուած, շիւմօնօ կոչուած, զգեստով, որ խալատի ձև ունի և լայն, մետաքսէ գօտիով կապւում է ազդրերի վերայից, որը ամբանում է մէջքին տարօրինակ ձևով, կարծես թէ բարձ լինի դրուած. և այդ հագուստը, «Կիմօնօն» նորա մշտական ձևի շորն է: Ճապոնուհին, երբ նստում է, սկիզբը չոքում է ծնկների վերայ և ապա ամբողջ մարմնով յենւում իւր կրունկներին: Երբ նա պառկում է քնելու, զլիսի տակը դնում է մի փայտէ բարձ, որպէս

զի խնամքով սանդրուած մազերի ձեր չփչանայ: Երբ նա ման է գալիս, բաղի նման կրունկը ծռում է և ամբողջ իրանը դուրս ցցում, կարծես թէ ամեն քայլափոխին վայր պիտի ընկնի: Ծանօթսերի հանդիպելիս, ճապոնուհին մի քանի անգամ կռանում է մինչև դետին, կարծես թէ նոքա թազաւոր լինեն, և առհասարակ նա միշտ պահպանում է իրանց երկրում ընդունուած քաղաքավարական խիստ ձևերը: Ճապոնուհին չի խմում, թուղթ շատ քիչ է խաղում, միայն թէ ամեն յարմար բոպէին նա սիրով ծխում է իւր չիրուխը, որը ծխախոտի ու լուցկիի հետ միասին, փոքրիկ տոպրակով պահում է իւր Կիմօնօյի լայն թևերում կարուած գրպանի մէջ:

Մաքրասիրութիւնը ճապոնուհու ամենազլխաւոր արժանաւորութիւններից մէկն է, որի համար նոյն իսկ զոհ է բերում մի ուրիշ առաքինութիւն՝ ամօթխածութիւնը: Նա ամեն օր, մինչև անգամ օրը մի քանի անգամ, լողանում է թէ տան մէջ, թէ փողոցում, իւր տան առաջը, ուր իրան անմեղ միամտութեամբ երևում է մերկ ամեն մէկի առաջ: Մի և նոյն ժամանակ, Լըոպպցի կնոջ ուսամերկ զգեստը նորան զայրացնում է. ճապոնուհին սիրում է կամ բոլորովին ծածկուել, կամ թէ հանգամանքից զբռնած, օրինակ ամառը, նա իւր հագուստը դէն է գցում ու բոլորովին մերկ սկսում է աշխատել թէ տան մէջ և թէ բացօթեայ:

Առանձին իմաստալից խօսակցութիւն կամ հոգևոր պաշար ճապոնուհուց պահանջել կարելի չէ, քանի որ նա փոքր հասակից սովորում է միայն երգ, պար, սամիզէն-ի (ճապոնական գիտար) վերայ նուագել, կարգալ, գրել և տնարարութիւն: Բայց թէ դորա փոխարէն նա ամուսնու կեանքը քաղցրացնում է իւր դուրեկան վարմունքով, հրեշտակային համբերութեամբ, իւր հեզութեամբ ու հնազանդութեամբ: Նա գիտէ ծաղիկներից սիրուն փնջեր ու շղթաներ պատրաստել և իւր ամուսնու շրեբը կարել, կարկատել: Նա դաստիարակում է իւր երեխաներին, սիրում և գուրգուրում է նոցա, իսկ իրան կեանքն անցնում է աշխատանքի ու հիասթափման մէջ: Ճապոն կնոջ ամենից երջանիկ ժամանակը երեխայութիւնն է. բայց երբ նա մարդու է գնում, պէտք է արդէն խաչ քաշէ իւր ազատութեան վերայ: Նորա ամուսնական լուծը 14—16 տարեկան հասակիցն է սկսում: Ճապոնուհին իսկապէս իւր ամբողջ կեանքում ստորադրեալի դեր է կատարում. քանի դեռ նա աղջիկ է, հօր կամքն է կատարում սրբութեամբ. երբ ամուսնանում է, պարտաւոր է հնազանդ լինել մարդուն, իսկ

երբ այրիանայ, այն ժամանակն էլ դառնում է մեծ որդու ստորադրեալը:

Ճապոնուհուն ինչ որ հրամայեն, նա կատարում է ճշտութեամբ. այնպէս որ նա շատ անգամ ծնողների կամքից դուրս չգալու համար, ամուսնանում է իրան անդուր մի մարդու հետ: Եթէ ամուսնու հայրն ու մայրը կենդանի են, նա այդ նոր տան մէջ ոչ մի իրաւունք չի վայելում, այլ դառնում է նոցա աղախինը բառի բուն նշանակութեամբ. և նոյն իսկ ամուսինը չի կարողանում իւր կնոջը պաշտպանել սկեսրայրի և սկեսուրի անարդար ու անխիղճ հալածանքից:

Ալիսա Բէկօն, իւր «կինը Ճապոնիայում» վերնագրով գրքի մէջ, բացականշում է, «երջանիկ է այն հարսը, որի սկեսրայրն ու սկեսուրը մեռած են»:

Եթէ մարդու ծնողները կենդանի չեն, ի հարկէ, այն ժամանակ երիտասարդ կինն է տունը կառավարում, միայն թէ ոչ հաւասար իրաւունքներով, ինչ որ ունի ամուսինը, այլ դառնում է նորա գլխաւոր աղախինը, ուրիշ ոչինչ: Ետ քիչ է պատահում, որ ճապոնուհին երևի հասարակութեան մէջ իւր ամուսնու հետ. մինչև անգամ տանը նա նորա հետ միասին չի ճաշում. մարդը նստում է ճաշելու, իսկ կինն այդ միջոցին ծառայում է նորան: Ամուսնու ցանկութիւնը նորա համար օրէնք է, որին նա սիրով և ուրախութեամբ հպատակում է: Նա պարտաւոր է ոչ միայն կարել ու լուալ ամուսնու շրերը, այլ և պէտք է օրն է նորան հագնուելու և հանուելու ժամանակ. շատ անգամ ծառայի գործը նա ինքն իր ձեռքով է անում և հպարտանում է, որ ամուսնու համար հոգացել է այդ բանը: Մինչև անգամ Ճապոնիայի թագուհին էլ պարտաւոր է ծառայել իւր թագաւոր ամուսնուն:

Ճապոնական բարոյախօս Կայբարին, իւր մի շարադրութեան մէջ, որ շատ տարածուած է Ճապոնիայում, ասում է թէ՛ «կինը երբէք չպէտք է դուրս գայ իւր ամուսնու հօր ու մօր հրամաններից. ամեն բանի համար նա պէտք է հարցնէ նոցա և անպայման կերպով հնազանդ լինի նոցա. մինչև անգամ եթէ սկեսուրն ու սկեսրայրը հարսին ատեն ու նախատեն, այդ ժամանակն էլ դարձեալ նա պարտաւոր է լսել: Կինը չպէտք է ետական լինի ու առաջ մտածէ իւր ծնողների մասին, այլ նա աւելի ուշադիր պիտի լինի դէպի իւր ամուսնու հայրն ու մայրը և ապա նորա եղբայրներն ու քոյրերը: Կինը պէտք նայէ ամուսնու վերայ ներքեից վերև, որպէս թէ նա երկինք լինի. նա պէտք է շարունակ, ամեն դէպքում, հետևի իւր ա-

մուսնուն, որպէս զի ազատ լինի երկնային անէծքից: Նախանձոտութեան մասին նա ամենևին մտքից չպիտի անցնէ, որովհետև դորանով իրանից կրհեռացնէ մարդուն և նորա աչքում անտանելի կըդառնայ: Կինը պարտական է վաղ վեր կենալ և ուշ քնել. ցերեկը նա անդադար պիտի աշխատի, կարէ, գործէ ու մանէ: Նա թէյ ու գինի չպէտք է շատ խմէ և գուարճութեան յետևից չպիտի ընկնի: Նա գործ չպէտք է ունենայ կախարդների ու գուշակողների հետ և աստուածների հետ չպիտի սերտ յարաբերութիւն ունենայ ու շարունակ չպէտք է աղօթք անէ. եթէ նա բարեխիղճ կերպով կատարում է իւր բոլոր պարտականութիւնները, ուրեմն էլ աղօթք անելու հարկաւորութիւն չունի, քանի որ առանց էն էլ նա կըլինի աստուածների հովանաւորութեան տակ:»

«Հայրեր» վերջացնում է կայբարին իւր խրատները՝ «սովորեցրէ՛ք այդ կանոնները ձեր աղջիկներին, դեռ երեխայութեան հասակից:»

Եւ ճապոնացի ծնողներն էլ բառացի կերպով հետևել են այդ ցուցմունքներին, որ ապացուցանում են նոցա աղջիկներն իրանց դառն ու չարքաշ կեանքով: Եւ պիտի զարմանալ, թէ ինչպէս գուարթ ու հեզ կերպով, այդ կանայք տանում են ամենազարհուրելի անարգանքները:

Ճապոնուհին երեխայ է մնում մինչև այն ժամանակ, երբ ինքն էլ մայր է դառնում և այնուհետև նա իւր ամբողջ կեանքըն ու սէրը նուիրում է զաւակներին ու ապա դառնում է այսպէս ասած, նոցա ստրուկը: Բայց ժպիտը երբէք չի անհետանում ճապոն կանանց շրթունքներից. քանի նոքա դեռ մօր թևերի ու խնամքի տակն են, նոցա ժպիտը երեխայական է. երբ նոքա դեռահաս օրիորդներ են դառնում, նոցա ժպիտն անմեղ-ուրախ է, իսկ երբ նոքա մարդու են գնում, այն ժամանակ նոցա ժպիտը արևուր ու դառն է: Ճապոնուհիք իրանց ամուսինների ներկայութեանը միշտ ժպտում են: Երբ ես մի քանի ամիս շարունակ ճանապարհորդում էի Ճապոնիայում, ասում է Հեսսէ Վարտէզը, առիթ շատ էի ունենում տեսնելու հազարաւոր ճապոն կանանց ամեն տեսակ պայմանի ու դիրքի մէջ, բայց թէ երբէք չեմ նկատել, որ այնտեղ կինը բարկացած, մոռյլ դէմք ունենայ. երբէք չեմ լսած նոցա բարձր խօսակցութիւնը, կամ հանոյանքը և երբէք էլ ականատես չեմ եղել կանացի կռիւներին ու բամբասանքին: Ճապոնուհիք շատ լաւ են հասկանում, որ ամուսիններն իրանց լիակատար տէրերն են և թէ նոքա համբերում են մինչև այն ժամանակ, քանի դեռ կի-

նը հնազանդ է և իրանց դուր է գալիս: Նախանձոտութեան տեսարանները, անհնազանդութիւնը, տրտունջն ու շատախօսութիւնը, բաւական յարգելի պատճառներ են, որպէս զի մարդը դուրս անէ իւր տանից կնոջն ու ապահարզան ստանայ: Եւ այն ժամանակ, կինը մենակ, առանց երեխաների և առանց որևէ նիւթական ապահովութեան, պէտք է վերադառնայ իւր հայրական տունը, դժբաղտացած ու հիասթափուած կեանքից: Եւ այդպէս, խեղճ կինն առանց նիւթական որ և է միջոցի, սկսում է կախումն ունենալ իւր ծնողներից, եղբայրներից, որովհետև Ճապոնիայում կանայք երբէք իրանց սեփականութիւնը չունեն: Միայն տղայ զաւակը ժառանգութիւն ստանալու իրաւունքն ունի և ով էլ որ ժառանգ չունենայ, որդեգրում է ուրիշ մի տղայի: Կնոջ բոլոր ունեցածը իւր հագուստեղէնն է, որ շատ չնչին բան է, համեմատութեամբ Եւրոպացի կնոջ զգեստներին հետ և էլի մի քանի բան տան պարագաներից: Իսկ ամեն մէկ աշխատանքի դուռ նորա համար փակ է, ուրեմն նորան էլ բան չի մնում, եթէ ոչ տանջուել ու համբերել:

Բայց ուր է թէ ճապոնուհիք իրանց ունեցած չարչարանքի և հոգացողութեան համար դէպի ամուսինները վայելէին նոցա սէրն ու ուշադրութիւնը: Եւ որովհետև ծնողներն իրանց աղջիկներին մարդու տալիս չեն պահանջում նորանից սէր դէպի ամուսինը, այնպէս էլ նո իւր մարդուց սէր չի սպասում ու տեսնում:

Պրօֆէսոր Չէմբերլէնը, որ Ճապոնիայում ապրել է քսան տարուց աւելի, իւր «Things Japanese գրքի մէջ ասում է որ նա այդքան ժամանակուայ մէջ միայն մէկ դէպք գիտէ, որ ճապոն տղայ ու աղջիկ սիրահարուած իրար առել են, այն էլ նորա Ամերիկայում են կրթութիւն ստացած եղել: Ի հարկէ, շատ անգամ ամուսիններն իրար դուր են գալիս, բայց այդ շատ հեռու է մեր սիրոյ մասին ունեցած գաղափարից:

Այն ինչ, այդ քնքոյշ, փոքրիկ ու սիրելի արարածները, որ գեղեցիկ օրիորդներ են, համբերող ամուսիններ և զոհաբերութեան ընդունակ մայրեր, կարծես թէ նոքա ամենքն էլ ծնուած են միայն սիրոյ ու փաղաքշանքի համար: Եւ միթէ դա մի անէծքի պէս բան չէ, որ այդ քաղաքակրթուած ու ինտելլիգէնտ ժողովրդին, երկինքը զրկել է մի ամենաբարձր զգացմունքից՝ սիրուց, բացականչում է Հ. Վարտէգը: Ճապոնացիք նոյն իսկ չեն հասկանում համբոյրի նշանակութիւնը, որը նոցա թւում է մի անասնական բան:

Եթէ դեռ ճապոնուհիք կարողանային իրանց զաւակներին

հետ մենակ ապրել ամուսինների տներում, այդ էլ մեծ բաղա-
կը լինէր նոցա համար, բայց թէ առաջին երեխան աշխարհ գա-
լուն պէս, մարդը հեռանում է կնոջից և սա պիտի համբերան-
քով տանի, եթէ մարդը նորից մի երկրորդ և մինչև անգամ
երրորդ կին բերէ իւր տունը. նա պէտք է ժպտայ, երբ ամու-
սինն իրան ներկայութեանը երկրորդ կնոջ հետ սիրալիք լինի
և պիտի լռէ, երբ նա նոյն իսկ իրան չնկատէ: Գուցէ ճա-
պոնուհին իւր ամբողջ էութեամբ եւ վրդովւում է ամուսնու
անսիրտ վարմունքից, բայց չէ՞ որ նա դեռ մանկութիւնից սո-
վորում է համբերել ու տանջուել: Ասենք նոքա շատ խիստ էլ
չեն կարող տանջուել ու մորմոքալ, ինչպէս ուրիշ ազգերի կա-
նայք, քանի որ նոցա անծանօթ է իսկական սիրոյ շերտ զգաց-
մունքը:

Հաստէ վարտէզը թէև հարևանցի կերպով ասում է, որ
ճապոն կնոջ համար աշխատանքի դռները փակ են, բայց պէտք
է նկատել, որ բացառութիւններ կան, մանաւանդ աղքատ դա-
սակարգի համար: Զօրօրինակ, մասնաւոր տներում, հիւրանոց-
ներում և թէյատներում ծառայողները մեծ մասամբ կանայք
են. շատերը նոցանից իրանց երիտասարդութիւնն ու տաղան-
դը նուիրում են Տերպսիսօրային (պարբերի մուսային: Ո՛վ չէ
լսել սքանչելի «գէյդաների» մասին, որոնք իրանց պարբերով
ու երաժշտութեամբ զբաղեցնում են հասարակութեանը և յա-
ճախ այդպիսիներն ամուսնանում են նոյն իսկ երկրի մեծամեծ-
ների հետ, դառնում են համեստ տանտիկիներ և կարողանում
են ամուսիններին գրաւել իրանց տաղանդով ու սրամտութեամբ:

Բայց ճապոնիայի ամենաբաղդաւոր կիներ կարող է համա-
բուել ցածր դասակարգի, և մանաւանդ գիւղերում ապրող, կի-
նը, որովհետև տղամարդն այնքան միջոց չունի, որ մի երկրորդ,
երրորդ կին էլ պահէ, իսկ կարիքը օրէնք չգիտէ և անն մար-
դը իւր կնոջ հետ միասին աշխատում է, միասին ուտում, խը-
մում են, և միասին էլ բաժանում են իրանց ուրախութիւնն
ու տխրութիւնը և աղքատ կիներ, շատ անգամ, փոխանակ մար-
դու աղախինը դառնալու, իւր տան մէջ լինում է մի իշխող
անձն:

Բայց չնայած ճապոն կանանց ստոր վիճակին և տղա-
մարդկանց այդքան իրաւունքներին ու ազատութեանը, պէտք
է նկատել, որ բաղդաւորապէս, ճապոն այր մարդը քա-
ղաքավարի է, հանդարտ ու զգոյշ. նոյն իսկ հասարակ
ժողովուրդն ունի այդ լաւ կողմերը. եթէ ոչ, որչափ ծանր
կըլինէր ճապոնուհու վիճակը:

ՏԻՐՈՒՀԻ ԿՈՍՏԱՆԵԱՆ